ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ПИСЬМА, ЗАМЕТКИ

«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Պատմա-բանասիրական հանդես»-ի 1964 թ. № 1-ում տպագրված՝ Հ. Ն. Խաչատրյանի հոդվածի մի ծանոթագրության մեջ (էջ 181) ասված է, որ իբր թե ես «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբության» իմ գրքում գրել եմ, թե լեհահայերը մասնակցել են 1726 թվականին՝ Աղնախների և 1727 թվականին՝ Հալիտորի ու Մեղրու կռիվներին:

Դա պարզապես թյուրիմացության արդյունք է, այդպիսի բան իմ գրքում չի ասված և չէր էլ կարող ասվել: Իմ գրքի առաջարանի մեջ ես ցույց եմ տվել, որ Հայաստանի ազատագրական շարժումներին օգնության եկած լեհահայերը Մոսկվա են հասել 1728 թ. հուլիսին, իսկ Մոսկվայից Աղնախներ են մեկնել 1728 թ. օգոստոս-սեպտեմբերին (էջ 23—24): Մի այլ տեղ ես պարզ ու որոշակի գրել եմ, որ *ԼԵՀԱՀԱՅԵՐԸ ՍՂՆԱԽՆԵՐ ԵՆ ՀԱՍԵԼ 1728 ԹՎԱԿԱՆԻՆ* և միանալով տեղի հայկական զինված ուժերին մասնակցել են *1728—1730 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻՆ* (էջ 25):

Մի՞թե հոդվածի հեղինակը չի կարդացել իմ առաջարանի այս միանգամայն պարզ ու որոշակի գրված տողերը կամ գրքում տպագրված փաստաթղթերը, որոնցից պարզ երևում է, որ լեհահայերը 1726—1727 թվականներին դեռևս Հայաստան չէին եկել, հետևաբար չէին էլ կարող մասնակցել 1726—1727 թվականների ազատագրական կռիվներին:

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԹԻՎ

Մեր քննադատական այն դիտողության մեջ, որի դեմ բողոքում է պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը, ասված է հետևյալը. «Այստեղ ճարկ եմ համարում նշել, որ անհիմն է Վ. Ա. Պարսամյանի այն հավատիացումը (տե՛ս «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը» նյութերի ժողովածուն, էջ 12—13), թե «Ռուսաստանից ու Լեհաստանից օգնության եկած հայ հայրենասերները» մասնակցել են Դավիթ-Բեկի ապստամբությանը, 1726 թվականին՝ Մեծ ու Փոքր Աղնախներում տեղի ունեցած կռիվներին և 1727 թվականին՝ Հալիձորի ու Մեղրու հակաամարտներին» («Պատմա-բանասիրական հանդես», 1964 թ., № 1 (24), էջ 181):

Վ. Պարսամյանը այժմ պնդում է, որ այդպիսի բան չի ասված և չէր էլ կարող ասվել: Հարցին վերաբերող փաստաթղթերի ուշադիր ուսումնասիրության դեպքում, իրոք, «այդպիսի բան չէր կարող ասվել»: Բայց գուցե անպիտան հենց այն է, որ ժողովածուի առաջաբանի հեղինակը տեսել պիտակի վրա գրել է.

«1724—1728 թվականներին Ղարաբաղի և Սյունիքի հայերը անընդհատ հերոսամարտեր են մղում թուրքական զավթիչների դեմ: Մի շարք տեղերում հերոս ոգնում ու օժանդակում են վրացիները, ադրբեջանցիները ու հրդեհը:

1726 թվականին Մեծ ու Փոքր Աղնախներում, 1727 թվականին Հալիձորի և Մեղրիի հակաամարտերում հայերը փոքրաթիվ ուժերով փայլուն հաղթանակներ են տանում թուրքական զորքերի դեմ, քաջության, խիզախության և հայրենասիրության բազմաթիվ վառ օրինակներ դրսևորվում մեր ազատագրական պայքարի պատմության մեջ: Այս կռիվներում, բացի հիշատակված զորավար Դավիթ-Բեկից, ալի են բարձրանում նաև նաայի Հասան-Ջալալյանը, Ավան հուզբաշին, Մխիթար ազատագնաը, Սանդիանա Նանումյանը, Թաբիխան յուզբաշին, Դերգոր յուզբաշին, Տեր Ավետիսը, Թորոսը, Բայանդուրը, Սմանը, Աբրահամը, Ավթանդիլը և շատ ուրիշներ: